ՏԵՂԵԿԱՆՔ

KfW/Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կոմունալ ենթակառուցվածքների ծրագիր – Փուլ 3» ծրագրի մասին

ՀՀ կառավարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը համաձայնության են եկել կնքելու ֆինանսական համագործակցության համաձայնագիր (Միջպետական համաձայնագիր) և ֆինանսավորել «Կոմունալ ենթակառուցվածքներ Ծրագիր II - Փուլ 3» (Ծրագիր) տարածքային ջրային ընկերություններում՝ Շիրակի Ջրմուղկոյուղի ՓԲԸ (Շիրակի մարզ), Լոռի Ջրմուղկոյուղի ՓԲԸ (Լոռու մարզ), Նոր Ակունք ՓԲԸ (Արմավիրի մարզ) և Հայջրմուղկոյուղի ՓԲԸ (Վայոց Ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզեր): Ծրագրի իրականացման նպատակով կնքվել են հետևյալ ֆինանսական համաձայնագրերը `

1. Վարկային և Ծրագրի համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության և KfW-ի միջև՝ 30.0 մլն ԵՎՐՈ վարկ (կապիտալ ներդրում)՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ին: Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2016 թվականի օգոստոսին:
2. Ֆինանսական պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև՝ 25.5 մլն ԵՎՐՈ վարկ (կապիտալ ներդրում): Ֆինանսական պայմանագիրը դեռ ուժի մեջ չի մտել:
3. Իրականացման ֆինանսական համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության և KfW-ի միջև՝ 15.0 մլն ԵՎՐՈ դրամաշնորհ (12.0 մլն ԵՎՐՈ՝ կապիտալ ներդրում, 3.0 մլն ԵՎՐՈ՝ տեխնիկական աջակցության դրամաշնորհ)՝ 2014 թվականի մայիսի 14-ին
4. Ֆինանսական համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության և KfW-ի միջև՝ 2.5 մլն ԵՎՐՈ դրամաշնորհ (տեխնիկական դրամաշնորհ)՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ին:

Կոմունալ ենթակառուցվածքներ Ծրագիր II - Փուլ 3-ը վերաբերում է ջրամատակարարման ցանցի վերականգնմանը, նորացմանը և ընդլայմանը, ինչպես նաև մի շարք հրատապ միջոցառումների իրականացմանը կոյուղու համակարգում՝ Շիրակի Ջրմուղկոյուղի ՓԲԸ, Լոռի Ջրմուղկոյուղի ՓԲԸ, Նոր Ակունք ՓԲԸ և Հայջրմուղկոյուղի ՓԲԸ սպասարկման տարածքներում և նաև կեղտաջրերի մաքրման կայանների (ԿՄԿ) կառուցմանը Սևան քաղաքում (Հայջրմուղկոյուղի ՓԲԸ սպասարկման տարածք) և Արմավիրում (Նոր Ակունք ՓԲԸ սպասարկման տարածք) (մանրամասները ներկայացված են Հավելված 2-ում): Ծրագրի նպատակն է բարելավել Շիրակ, Լոռի,

Վայոց Ձոր, Սյունիք և Գեղարքունիք մարզերի մի շարք քաղաքների և շրջակա գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը, վստահության և կայունության ապահովումը՝ բարելավելով կենսապայմանները, բարձրացնելով հանրային առողջության չափանիշները և երկրում խթանելով տնտեսական աճը:

Փուլ 3-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքներ՝

1. Հայջրմուղկոյուղի ՓԲԸ՝ ջրամատակարարման ցանցի վերակառուցում, նորացում և ընդլայնում Վայոց Ձոր, Սյունիք, Գեղարքունիք մարզերի մի շարք քաղաքներում և հարակից գյուղերում, ինչպես նաև ԿՄԿ-ի և կոլեկտորի կառուցում Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում:
2. Շիրակ Ջրմուղկոյուղի ՓԲԸ՝ ջրամատակարարման ցանցի վերակառուցում, նորացում և ընդլայնում Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և մի շարք հարակից գյուղերում:
3. Լոռի Ջրմուղկոյուղի ՓԲԸ՝ջրամատակարարման ցանցի վերակառուցում, նորացում և ընդլայնում Լոռի մարզի Վանաձոր քաղաքում և մի շարք հարակից գյուղերում:
4. Նոր Ակունք ՓԲԸ՝ ԿՄԿ-ի կառուցում Մեծամոր քաղաքում, ինչպես նաև կոյուղու պոմպակայանի և կոլեկտորի վերակառուցում Արմավիր և Մեծամոր քաղաքներում (Արմավիրի մարզ):
5. Ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածք չընդգրկված 560 գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման փորձնական ծրագիր:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015-2018 թվականների ընթացքում:

Վերոհիշյալ աշխատանքների իրականացման նպատակով արդեն իսկ կնքվել են պայմանագրեր խորհրդատվական ընկերությունների հետ՝ նախագծման, տեխնիկական և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման համար: Նախագծման աշխատանքները արդեն մեկնարկել են: